





Արամայիս Աղամալեամ և իր արծաթեայ փորագրութիւնները:

քայի էական և բնորոշ յատկանիշները — խմացականութիւնը, խոհունութիւնը և ջերմ հայրենասիրութիւնը: Նկարի բովանդակութեան առանձին գրաւորութիւն են տալիս գեղաքանդակ զարդանկարները: Ներքեւի մասում փորագրւած է իրանի քարտէզը և Ահուրմազդայի նկարը:

Փորագրական արեստի մի այլ գեղեցկութիւն է ալբոմի Բ. արծաթեայ թերթիկը: Դա դարձեալ իրանի արքայի մեծագիր նկարն է, որի խուհուն հայեացքի մէջ արտացոլում է նրա ջերմ հայրենասէր ոգին: Արծաթեայ թերթիկին առանձին երանգ և փայլ են տալիս նրբաքանդակ արքայական շքանշանները, նոր խորհրդանշանը, իրանեան դրօշը, նախկին Ռէզա Շահ Փահլավի ձիու վրայ նստած արծառնը, մանաւանդ շրջանակւած նուրբ զարդաքանդակը:

Արեստի տեսակէտից ուրոյն արժէք է

ներկայացնում նաեւ արծաթեայ երրորդ թերթիկը: Դա հանգուցեալ Ռէզա Շահ Փահլավի մեծագիր նկարն է, որի գլխաւոր պատկերի վրայ արեւատագէտը զրաւարել է արքայի բնաւորութեան էական գծերը — նրա խիզախութիւնը, համարձակութիւնը և վճռականութիւնը: Նկարի վերելքը պատկերող խորհրդապատկերները, ներքեւում իրանեան դրօշներ ու գէնքերը, իսկ շրջանակի նրբաքանդակ զարդանկարները խորացնում են ընդհանուր տպաւորութեան գեղեցկութիւնը:

Արծաթեայ ալբոմի ամենագրաւիչ, ամենանուրբ և գեղեցիկ մի այլ էջը չորրորդ թերթիկն է: Դա արքայադուստր Շահնազ Փահլավի մեծագիր նկարն է, որ շրջանակւած է իրանեան գեղեցիկ ծաղկանկարներով և զարդաքանդակներով: Փոքրիկ երեխայի պայծառ հայեացքի և անուշ

աչքերի մէջ կարդում էք նրա անմեղութիւնը, անկեղծութիւնը, խելացի արտայայտութիւնը և հոգու քնքշութիւնը:

Իր հարուստ բովանդակութեամբ և գեղաքանդակ զարդանկարներով սքանչելի փորագրութիւն է ալբոմի հինգերորդ արծաթեայ էջը, որ ներկայացնում է անցեալից դրաւներ, դէմքեր և պատմական վայրեր: Թերթի կենտրոնում իշխում է անմահ բանաստեղծ Ֆիրդուսի արձանը, իսկ ֆոնի վրայ քանդակւած է Կիւրոսի Դամբարանը: Վերելք նայում են իրանի բանաստեղծական գրականութեան լուսաւայծառ դէմքերը — Սապօհին, Օմար Խամիսը, Հաֆէզը: Կարդում էք նաեւ մի քանի անմահ Ֆիրդուսի «Շահնամ»-ից, տեսնում էք նաեւ Պերսէպոլիսի բարձրաքանդակները, իսկ կամարում իշխում է Ռուստամի և Զօհրաբի մենամարտը ներկայացնող մի պատկեր:

Մի երեւոյթ անժխտելի է, որ Արամայիս Աղամալեանը վարպետ Գրաֆիկ-Դիմանկարիչ է, որը զիտէ արծաթեայ էջերի վրայ կերպարների պայծառ դէմքերը և նրանց էական յատկանիշները քնքշաւոր գծերով զրաւարել: Նա այժմ իր ցայտուն բարձր է պահել արծաթի վրայ փորագրութեան ռեալիստական արեստի դրօշը և այդ գծով էլ մեծ ապագայ է խոստանում:

Ահա նրա կեանքի ուրազիւք: Ծնւել է նա 1910 թւին Հին-Նախիջևանում: 1918 թւականի կոտորածների շրջանում նա իր ծնողների հետ գաղթում է Զանգեզուր, յետոյ 1919 թւին անցնում Թաւրիզ, ուր 1921 թւին անցնում է Երկու տարի: 1921 թւին անցնում է Երեւան և աւարտում է 7-ամեայ դպրոցը: Ապա յաճախում է Երեւանի գեղարեստական տէխնիկումը և իր նկարչական յատկանիշները մշակում յայտնի նկարիչներ՝ Ստեփան Աղաջանեանի, Մարտիրոս Սարգսանի, Սեդրակ Առաքելեանի և Գարրիէլ Գիւրջեանի մօտ:

1926 թւին աւարտում է նկարչական դպրոցը: Նոյն թւին տեսնում ենք նրան Թիֆլիսում, ապա Բերլինում, ուր մի տարի, որպէս ազատ ունկնդիր, յաճախում է գեղարեստական դպրոցը: Սա իր նախնական ծանր պայմանները կայն, տեսնական ծանր պայմանները նրան ստիպում են վերադառնալ իրան: Նշենք, որ դեռ 1925 թւին Թաւրիզում, Հրաչիկ Ստեփանեանի հետ, պատրաստում է արծաթեայ մի գեղեցիկ ալբոմ, 5 թերթից բաղկացած, որը Թաւրիզի հայու թերթի բաղկացած, որը Թաւրիզի հայու թերթի նաեւ է ուղարկում Հայաստան: Թերթի նաեւ է ուղարկում Հայաստան: Ալբոմի սքանչելի զարդաքանդակները և զիմապատկերները զրաւում են հայ լազադոյն արեստագէտների ուշադրութիւնը և արժանանում նրանց ջերմ գնահատութեան:

1934 թւին արեւատագէտը հաստատւում է Թէհրանում, ուր մինչեւ օրս էլ զբաղւում է արծաթե թերթերի, տուփերի վրայ գրաֆիկ փորագրութեամբ:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

8 փետր. 1950

## Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

Աննուն, խաղաղ և համապիտան իրիկուն, Արթուրի պէս և լուսնաւոր երգի պէս. Ծաղիկներ կան որ կը բոցնեն տարիակեղ, Եւ ռաբիւներ՝ որ կը ժպտին ստողերուն:

Արդարեւնու և տրտման իրիկուն, Հաւրոյրի պէս, երդումնաւոր խօսքի պէս, Թաւրիկներ կան որ կը մեռնին գաղտնապէս, Եւ ռաբիւներ՝ որ կ'աղերսեն վարդերուն:

Իմ իրիկուն առաջտեմէն ըստեղծում, Իմ գերեզման օրօրոցն ըսկրսեալ. Ո՛վ մեկ երազ, ո՛վ մեկ ըրձակ բեռարաց...

Ա՛յ ժամանակն է Միջոցէն հոգեզմայլ. Զայները լուսն և ժաղիկները տփոյն. Յաւերժակն, յոգնարախիժ իրիկուն...

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ